ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում 2010 թ. դեկտեմբերի 2–3-ին գումարեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հինգերորդ նստաշրջանը:

Բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը*: Նա նշեց, որ երիտասարդ արվեստաբանների ավանդական դարձած, հերթական՝ հինգերորդ գիտական նստաշրջանի աշխատանքներին մասնակցում են երիտասարդ գիտնականներ ոչ միայն ՀՀ - ԳԱԱ արվեստի ինստիտուտից (ՀՀ ԳԱԱ ԱԻ), այլև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից (ԵՊԿ), Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայից (ԵԳՊԱ), Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտից (ԵԹԿՊԻ), Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանից (ԵՃՇՊՀ), Երևանի պետական համալսարանից (ԵՊՀ), Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանից (ՄՄ) և Հայաստանի պատմության թանգարանից (ԵՊԹ):*

Նստաշրջանի մասնակիցներին և հյուրերին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը՝ *կարևորելով գիտական նստաշրջանների դերը երիտասարդ գիտնականների ձևավորման ու զարգացման գործում: Նա առաջարկեց ապագայում ներդնել լավագույն զեկուցումների պարգևատրման պրակտիկան:*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ, պատմական գիտությունների թեկնածու Արտակ Մաղալյանն *առանձնահատուկ ողջունեց «հատկապես այն երիտասարդ արվեստագետներին, որոնք հանդես են գալու իրենց առաջին գիտական զեկուցումներով» և նստաշրջանի աշխատանքներին մաղթեց «գիտական աշխույժ քննարկումներ և բեղմնավոր ընթացք»:*

Երկօրյա նստաշրջանի հինգ նիստերի ընթացքում լսվեց 28 զեկուցում, որոնցում ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղերը:

Կերպարվեստ: *Արվեստագիտության թեկնածու* Աննա Գալստյանը *(ԵԳ ՊԱ) «Արվեստի քննադատությունը և արդիականությունը Շառլ Բոդլերի և Պիետրո Արետինոյի տեքստերում» թեմայով բանախոսության մեջ համեմատեց XIX դ. երկրորդ կեսի ֆրանսիացի բանաստեղծ, արվեստի տեսաբան Շառլ Բոդլերի արվեստի քննադատության առաջին գրախոսականները XVI դարի Իտալիայում՝ Վենետիկում, հանգրվանած Պիետրո Արետինոյի քննադատական նամակների հետ: Հայ կերպարվեստի ռեալիստական դպրոցին պատկանող, արդեն մեր օրերում դասական դարձած նկարիչ Փանոս Թերլեմեզյանի՝ Էջմիածնում գտնվող աշխատանքներին նվիրված զեկուցման մեջ* Մերի Կիրակոսյանը *(ՀՀ ԳԱԱ ԱԻ), հենվելով*

արխիվային վավերագրերի վրա, ներկայացրեց նկարչի՝ գեղանկարչության ասպարեզում առաջին մրցանակի թվագրման հետ կապված ճշգրիտ տվյալներ, ինչպես նաև անվանի նկարչի մինչ այժմ չուսումնասիրված աշխատանքները՝ անդրադառնալով վերջիններիս ստեղծման պատմությանը և մատնանշելով դրանց գտնվելու վայրը: Շադի Ղոմշեհի *(ՀՀ ԳԱԱ ԱԻ) «Մորթեզա Մոմայեզը՝ իրանական գրաֆիկական դիզայնի հիմնադիր» բանախոսության մեջ բնութագրվեց XX դ. Իրանի մեծագույն գրաֆիկ-նկարիչներից մեկի՝ Մորթեզա Մոմայեզի արվեստը, բացահայտվեցին նկարչի ձեռքբերումները գրաֆիկական դիզայնի տարբեր ոլորտներում:* Մանե Մկրտչյանը *(ՀՀ ԳԱԱ ԱԻ) անդրադարձավ սիմվոլիստական ուղղության հետևորդների շրջանում դևի կերպարի նկատմամբ հետաքրքրության աճի պատճառներին՝ առանձնակի քննության առնելով Հակոբ Գյուրջյանի «Դև» քանդակը (1912):* Շուշանիկ Զոհրաբյանի *(ՀՀ ԳԱԱ ԱԻ) «Վարդգես Սուրենյանցի «Ճապոնուհին» ռուսական և եվրոպական ճապոնիզմի համատեքստում» թեմայով բանախոսության նպատակն էր վերլուծել դարերի սահմանագծին Վարդգես Սուրենյանցի գեղարվեստական համակարգի ձևավորումը նրան ժամանակակից միտումների, ռուսական և եվրոպական մշակույթի համատեքստում: 1960-ական թվականները շրջադարձային եղան հայկական կինոյի համար. սկսվեց ձևավորվել «նոր ալիքը»: Մեծ ծաղկում ապրեց հայկական կինոպլակատը, որի զարգացման միտումներն առավել վառ արտահայտվեցին նկարիչ Կարապետ Երանյանի արվեստում, որին էլ նվիրված էր* Արտավազդ Եղիազարյանի *(ՀՀ ԳԱԱ ԱԻ) զեկուցումը:*

Հարություն Կալենցի գրաֆիկայի մասին բանախոսության մեջ Արմեն Եսայանցը *(ԵՊՀ) բացահայտեց Կալենց արվեստագետի ձևակառուցողական մտածողությունը:* Դիանա Գրիգորյանը *(ԵՊՀ) «Կարսի Սուրբ Առաքելոց տաճարի թմբուկի քանդակները» բանախոսության մեջ ներկայացրեց այդ քանդակների պատկերագրական ու ոճական առանձնահատկությունները:*

Գոհար Վարդանյանը *(ԵԳՊԱ) «Սովետական արվեստ» և «Գարուն» ամսագրերի քննադատական հոդվածների համեմատական օրինակների ու «խորհրդահայ մոդեռնիզմի» շուրջ ծավալվող բանավեճերի հիման վրա ներկայացրեց 1960-ականների վերջի ու 1970-ականների սկզբի հայ քննադատական միտքը, իսկ* Մարիամ Վարտանովայի *(ԵՊՀ) զեկուցումը վերաբերում էր Մխիթար Սեբաստացու հրատարակած Ավետարանին (1732), Աստվածաշնչին (1733–1737) և մի շարք այլ գրքերի պատմությանը, դրանցում առկա փորագրանկարներին ու զարդարվեստին:*

«Հայաստանի միջնադարյան քառանիստ կոթողների ծավալատարածական հորինվածքը» բանախոսության մեջ Գրիգոր Գրիգորյանը *(ԵՊԹ) ներկայացրեց հայկական մշակույթի ինքնատիպ հուշարձանների՝ քառանիստ կոթողների հորինվածքի, վերջինիս իմաստային և կիրառական որոշ տարրերի առանձնահատկությունների հետ կապված հարցեր: Իր զեկուցման մեջ* Հռիփսիմե Վարդանյանը *(ԵՊՀ) քննության առավ Ռ. Խաչատրյանի արվեստը:* Դավիթ Ղազարյանը *(ՄՄ) «Հայ մանրանկարչական ժառանգության նոր էջեր» զեկուցման մեջ ներկայացրեց Մատենադարանում կատարված*

ուսումնասիրությունների արդյունքում պարզված 6 ձեռագրերի մանրանկարիչների ինքնությունը, որոնցից երկուսը (Մեսրոպ և Սահակ վարդապետ), առհասարակ, նոր անուններ են:

Ճարտարապետություն: *Ճարտարապետության թեկնածու* Արեգ Հասրաթյանի *(ՀՀ - ԳԱԱ ԱԻ) զեկուցումը Պտղնավանքի՝ VII դ. ավերված հուշարձանի վերակազմության մասին էր: Ճարտարապետության թեկնածու* Արմեն Շատվորյանը *(ԵՃՇՊՀ) շոշափեց բուժհաստատությունների կառույցների ճարտարապետական կերպարների ձևաստեղծման խնդիրները և զարգացման հեռանկարները:*

Երաժշտություն: *Արվեստագիտության թեկնածու* Տաթևիկ Շախկուլյանը *(ԵՊԿ) «Կոմիտասի ստեղծագործական մի սկզբունքի մասին» զեկուցման մեջ ներկայացրեց կոմիտասյան ինքնատիպ պոլիֆոնիայի մի առանձնահատուկ դրսևորում:* Նարինե Սահակյանը *(ԵՊԿ) ներկայացրեց կոմպոզիտոր Ղազարոս Սարյանի երաժշտության ոճական առանձնահատկությունները:* Անահիտ Մարգարյանը *(ԵՊԿ) իր զեկուցման մեջ բացահայտեց կոմպոզիտոր Լևոն Չաուշյանի «Պրելյուդներ» դաշնամուրային յոթմասանի շարքի (1973) ամեն պիեսի ձևակառուցողական հատկանիշները և կոմպոզիցիոն առանձնահատկությունները: Համերգային գործունեություն վարող դաշնակահար-մանկավարժների՝ Անահիտ Ներսիսյանի, Արմեն Բաբախանյանի և Վիլի Սարգսյանի կարծիքների հետազոտության հիման վրա* Սուսաննա Ղազարյանը *(ԵՊԿ) առաջադրեց հայ դաշնամուրային կատարողական արվեստի և մանկավարժության փոխադարձ ազդեցությունների հարցի վերաբերյալ որոշ խնդիրներ:* Գայանե Ամիրաղյանի *(ՀՀ ԳԱԱ ԱԻ) «Հայնաեղանակների ուսումնասիրության մեթոդաբանական սկզբունքներն ըստ Կոմիտասի» բանախոսության մեջ դիտարկվեցին ութձայն համակարգի ուսումնասիրության կոմիտասյան մեթոդաբանության սկզբունքները:* Գուրգեն Բավեյանը *(ԵՊԿ) առաջ քաշեց դասական օպերային բեմադրությունները նորացնելու անհրաժեշտության հարցը:*

Թատրոն: Անուշ Ասլիբեկյանի *(ՀՀ ԳԱԱ ԱԻ) զեկուցումը Վարդան Ամեմյանի «Իմ սիրտը լեռներում է» բեմադրության (1961) մասին էր: Իր զեկուցման մեջ* Էրիկ Բարսեղյանը *(ԵԹԿՊԻ) անդրադարձավ առաջին հայ պրոֆեսիոնալ թատերական ռեժիսոր Գևորգ Պետրոսյանի բեմադրական որոնումների նախադրյալներին:* Մկրտիչ Հովհաննիսյանի *(ԵԹԿՊԻ) բանախոսությունը նվիրված էր Մկրտիչ Ջանանի «Շահնամե» դրամային՝ իբրև Արևելքի էկզոտիկ և խայտաբղետ միջավայրում, ուր ի ցույց են դրվում մարդկային բնության դրսևորումները:*

Կինո: Արսեն Համբարձումովը *(ՀՀ ԳԱԱ ԱԻ) դիտարկեց Ս. Փարաջանովի այն ֆիլմերի կինոգիտական վերլուծության առանձնահատկությունները, որոնցում սյուժետային ժամանակագրական հաջորդականությունը չունի առաջնային նշանակություն:*

Սփյուռքահայ արվեստ: *Արվեստագիտության թեկնածու* Արթուր Ավանեսովը *(ՀՀ - ԳԱԱ ԱԻ) քննության առավ Ժնևում բնակվող հայ կոմպոզիտոր Արամ Հովհաննիսյանի դաշնամուրային ստեղծագործությունները և հայ երաժշտագիտության շրջանառության մեջ նոր տերմիններ ներմուծեց՝ ասոնանս, հարմոնիկ հարթություն:* Լուսինե Նուրազյանը *(ՀՀ ԳԱԱ*

ԱԻ) անդրադարձավ բեմադրիչ և դերասան Պերճ Ֆազլյանի՝ 1964-ին Լիբանանում բեմադրած սյուրռեալիզմի հետևորդ Ժորժ Շեհատեի «Վասկոյի հեքիաթը» պիեսին: Գառզուի (Գառնիկ Զուլումյան) վերջին թատերական ձևավորմանը՝ Ժ. Օֆենբախի «Պերիկոլա» օպերետին էր նվիրված Մարգարիտա Քամալյանի *(ՀՀ ԳԱԱ ԱԻ) զեկուցումը:*

Ամփոփելով Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հինգերորդ նստաշրջանի արդյունքները՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր Ա. Ասատրյանը *նկատեց, որ նստաշրջանն իր երիտասարդ արվեստաբանների հասուն, հետաքրքիր և խոստումնալից զեկուցումներով ժխտում է գիտության, գոնե հայ արվեստագիտության ծերացման վերաբերյալ ենթադրություններն ու մեկ անգամ փաստում ևս , որ հայ արվեստագիտությունն ունի հուսալի հերթափոխ:*

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼՅԱՆ
ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ